



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 ապրիլի 2017 թվականի N 360 - Ն

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականի հունիսի 1-ին ստորագրված վարկային համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման նպատակով, ինչպես նաև ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ և 7-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 220 կՎ բարձրավոլտ էլեկտրահաղորդման օղային գծերի կառուցման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով՝ սույն որոշման հավելվածում նշված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և

Վայոց ձորի մարզերի որոշ համայնքներում գտնվող՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող տարածքների նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) ծրագիրն ունի համապետական կարևոր նշանակություն, քանի որ նպաստում է էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը.

2) ծրագրի արդյունավետ իրականացումը չի կարող ապահովվել՝ առանց սույն որոշման հավելվածում նշված տարածքների օտարման, քանի որ էլեկտրահաղորդման գծի կառուցումն ու շահագործումն անհնար է առանց հենարանների տեղակայման և անվտանգության գոտիների համար անհրաժեշտ հողատարածքների ձեռքբերման, որոնց ընտրությունն իրականացվել է սահմանված շինարարական և տեխնիկական նորմերի շրջանակներում՝ բնակավայրերի, պատմամշակութային հուշարձանների, բնապահպանական տարածքների և ենթակառուցվածքների շրջանցմամբ՝ հենարանների տեղակայումը հնարավորինս նախատեսելով գոյություն ունեցող էլեկտրահաղորդման գծի միջանցքում.

3) սույն որոշման հավելվածում նշված տարածքների նկատմամբ ճանաչված բացառիկ՝ գերակա հանրային շահը չհիմնավորված վնաս չի պատճառում սեփականատերերին, քանի որ ծրագրի շրջանակներում կառուցվող բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի նախագծման փուլում հաշվի են առնվել բոլոր շահագրգիռ մարմինների և ազդակիր համայնքների առաջարկությունները և դիտողությունները:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման հավելվածում նշված տարածքների ձեռք բերողը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ ձեռք բերող).

2) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2017 թվականի մայիսի 1-ն է.

3) սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին)։

4) սույն որոշումից ծագող՝ օտարվող սեփականության նկատմամբ օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները ենթակա են պետական գրանցման՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետում ձեռք բերողի հաշվին։

5) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 7-օրյա ժամկետում այն պատշաճ ձևով ուղարկվում է օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց։

6) սույն որոշմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 108-Ն որոշմամբ սահմանված կարգով և նկարագրության արձանագրության օրինակելի ձևով։

7) պետության և ձեռք բերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանվում են օրենքի հիման վրա՝ լիազոր մարմնի և ձեռք բերողի միջև կնքված պայմանագրին համապատասխան։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
2017 թ. ապրիլի 14
Երևան

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
ապրիլի 6-ի N 360 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՃԱՆԱԶՎԵԼ Է ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ

NN ը/կ	Գտնվելու վայրը (մարզը, համայնքը)	Օտարման ենթակա տարածքների չափը (հա)	Կադաստրային ծածկագիրը	Նպատակային նշանակությունը	Տարածքների կոորդինատները «WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02)» համակարգով	
					Y	X
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վերին Գետաշենի գյուղական համայնք	0,0155	05-087-0202-0225	բնակավայրերի	8520428,791	4443285,829
					8520420,325	4443309,139
					8520436,001	4443302,559
					8520428,791	4443285,829
2.		0,0163	05-087-0202-0239	բնակավայրերի	8520480,986	4443284,396
					8520488,393	4443301,584
					8520497,091	4443277,636
					8520480,986	4443284,396
3.		0,059	05-087-0202-0220	բնակավայրերի	8520472,870	4443164,464
					8520467,636	4443178,875
					8520477,327	4443174,807
					8520472,870	4443164,464
4.		0,0272	05-087-0202-0211	բնակավայրերի	8520481,577	4443140,489
					8520502,336	4443131,775
					8520492,788	4443109,620

1	2	3	4	5	6	7
5.		0,0016	05-087-0202-0245	բնակավայրերի	8520481,577	4443140,489
					8520505,995	4443241,364
					8520508,312	4443246,740
					8520511,033	4443239,249
6.		0,0272	05-087-0207-0008	բնակավայրերի	8520505,995	4443241,364
					8520614,957	4442773,245
					8520603,807	4442803,945
7.		0,0436	05-087-0207-0011	բնակավայրերի	8520624,118	4442796,796
					8520614,957	4442773,245
					8520637,342	4442711,611
					8520624,881	4442745,919
8.	ՀՀ Վայոց ձորի մարզ, Աղնջաձորի գյուղական համայնք	0,0251	10-007-0144-0071	գյուղատնտեսական	8520650,828	4442735,247
					8520641,293	4442709,986
					8520637,342	4442711,611
					8520523,425	4419796,130
					8520524,123	4419796,406
					8520540,991	4419797,964
9.	ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձորի քաղաքային համայնք	0,0062	10-001-0338-0003	գյուղատնտեսական	8520545,498	4419786,577
					8520529,684	4419780,318
					8520523,425	4419796,130
					8528379,680	4401113,950
					8528395,319	4401108,667
10.		0,0241	10-001-0360-0016	գյուղատնտեսական	8528394,353	4401105,809
					8528378,254	4401109,726
					8529084,890	4400781,420
					8529098,520	4400774,130
					8529091,130	4400760,390
					8529077,500	4400767,780

1	2	3	4	5	6	7
11.	ՀՀ Վայոց ձորի մարզ, Ագարակաձորի գյուղական համայնք	0,0243	10-004-0121-0003	գյուղատնտեսական	8529338,256	4400622,026
					8529347,032	4400641,063
					8529356,432	4400636,996
					8529352,880	4400619,120
12.		0,0324	10-004-0120-0008	գյուղատնտեսական	8529628,208	4400674,825
					8529628,748	4400692,810
					8529646,723	4400692,365
					8529646,189	4400674,390
13.	ՀՀ Վայոց ձորի մարզ, Մալիշկայի գյուղական համայնք	0,0138	10-032-0260-0020	գյուղատնտեսական	8534246,771	4399026,700
					8534254,783	4399024,083
					8534244,061	4399013,313
					8534242,242	4399013,898
					8536448,283	4398465,699
					8536455,547	4398483,399
					8536462,880	4398479,360

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

